ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տեսջիք որպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛ իբրեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք. գնեցէք վժամանակս, վի աւուրքս չարութեան են: Վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացարուք վինչ են կամք Տեառն» (Եփեսացի Ե, 15—17) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ասասցեն յաւուր յայնմիկ. Ահաւասիկ Տէր Աստուած մեր յոր յուսացեալ էաք, եւ ապրեցուսցէ զմեզ. զի սա է Տէր, եւ սպասէաք սմա. եւ ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի փրկութեան մերում» (Եսայի ԻԵ 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը «Ուղիղ եղիցին ա-ղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր» (սաղմոս) բնաբանով:

Հայոց Հայրապետը քարոզի ընթացքում խոսում է նորոգ հանգուցյալ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական մրցանակների դափնեկիր, հայ ժողովրդի նվիրյալ կավակ Առնո Բաբաջանյանի կյանքի և վաստակաշատ գործունեության մասին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Առնո Բաբաջանյանի հիշատակին:

*
* *

Նոյեմբերի 22-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը՝ ուղեկցությամբ Երուսաղեմի հայոց միաբանության անդամ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանի:

Ամենապատիվ պատրիարք հորը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում են Մայր Աթոռի միաբանները՝ գլխավորությամբ լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի.

Ժամը 18-ին Վեհարանում Ամենապատիվ Պատրիարք Հորը եղբայրական սիրով և զգացումներով ընդունում է Վեհափառ Հայրապետը: Վեհարանի ընդունելության սրահում, Մայր Աթոռի միաբանների ներկայությամբ, երկու հոգևոր առաջնորդների միջև տեղի է ունենում ջերմ և սրտագին զրույց:

*
* *

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետին է այցելում Հալեպի նահանգապետ պրն. Մուհամմեդ Նուր Մառալիդին իր տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և հարգելի հյուրի միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց:

*
* *

Նոյեմբերի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը ստանալով Վեհափառ Հայրապետի բարի մաղթանքները՝ հրաժեշտ է տալիս Հայոց Հայրապետին ու Մայր Աթոռի միաբաններին և մեկնում Երուսաղեմ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 3-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

*
* *

Դեկտեմբերի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 17-ին, շաբաթ.—Այսօր Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում տեղի ունեցավ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի պաշտոնական հանձնումը ՍՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական մրցանակների դափնեկիր Գրիգոր Խանջյանին:

*
* *

Դեկտեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա է լինում «Ալմաստ» ներկայացմանը:

*
* *

Դեկտեմբերի 22-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ալագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ: